ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արման Պողոսյան, ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

2. Գործուղման վայրը և ժամկետները

ք. Լոնդոն (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն), 2023 թվականի մայիսի 8-13-ը

3. Հրավիրող կողմը

Անգլիայի և Ուելսի Երդվյալ հաշվապահների ինստիտուտ (ICAEW)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Անգլիայի և Ուելսի Երդվյալ Հաշվապահների Ինստիտուտի (ICAEW) կողմից կազմակերպված աուդիտորական ծառայությունների որակի հսկողության արտաքին գնահատման ընթացակարգերի գործնական կիրառման փորձի փոխանակման միջոցառումներին:

5. Քննարկված թեմաները

- Աուդիտի որակի հսկողության համակարգի կառուցվածքը ՄԹ-ում
- Անգլիայի և Ուելսի Երդվյալ Հաշվապահների Ինստիտուտի դերը աուդիտի որակի հսկողության համակարգում
- Ֆինանսական Հաշվետվողականության Խորհրդի դերը աուդիտի որակի հսկողության համակարգում
- Անգլիայի և Ուելսի Երդվյալ Հաշվապահների Ինստիտուտի կողմից իրականացվող աուդիտի որակի հսկողության ընթացակարգերը
- Անգլիայի և Ուելսի Երդվյալ Հաշվապահների Ինստիտուտի կողմից իրականացվող աուդիտի որակի հսկողության մեթոդաբանությունը
- Աուդիտի և հաշվապահական հաշվառման ոլորտում արդի զարգացումները

- Կայունության հաշվետվողականության դերը և հեռանկարները

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջոցառումների շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել Անգլիայի և Ուելսի Երդվյալ Հաշվապահների Ինստիտուտի (ICAEW) նախագահ Ջուլիա Պեննիի, Ֆինանսական Հաշվետվողականության Խորհրդի (FRC) Աուդիտի որակի հսկողության տնօրեն Էնթոնի Բարրետտի, ինչպես նաև Միացյալ Թագավորության կառավարության Բիզնեսի, էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության դեպարտամենտի (Department for Business, Energy & Industrial Strategy) Ֆինանսական հաշվետվողականության և աուդիտի կարգավորման գծով ղեկավար Դեբբի Քրոշոուի հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են ՀՀ-ում աուդիտի որակի հսկողության ոլորտում առկա զարգացումները, ինչպես նաև քննարկվել են Միացյալ Թագավորության փորձի առանձնահատկությունները՝ ՀՀ-ում աուդիտի որակի հսկողության արդյունավետ համակարգ ձևավորելու համատեքստում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Առկա չեն

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Մայիսի 16, 2023թ.

Recoverable Signature

X

ԱՐՄԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Signed by: POGHOSYAN ARMAN 3809820482